ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունվարի 2014 թվականի N 8 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 276-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-Ն որոշման 1-ին հավելվածի 48-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» N 276-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) 2-րդ կետի 16-րդ ենթակետի՝

ա. «ժ□ պարբերությունում □մակաբուծական□ բառը փոխարինել □մակաբուծաբա-նական□ բառով,

բ. «ժա□ պարբերությունում □իմունոլոգիական□ բառը փոխարինել □իմունաբանական□ բառով,

գ. «ժբ□ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) 2-րդ կետի 18-րդ ենթակետի՝

ա. «ա□ պարբերությունում □ռեֆլեքսաթերապևտիկ□ բառը փոխարինել □բարոթերապևտիկ□ բառով,

բ. «բ□ պարբերությունում □մանուալ թերապևտիկ□ բառերը փոխարինել □էլեկտրաբուժում□ բառով,

գ. «գ□ պարբերությունում □բուժական մերսում□ բառերը փոխարինել □լուսաբուժում□ բառով,

դ. «դ□, «ե□ և «զ□ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել.

3) 2-րդ կետի 19-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

□ա. բալնեոլոգիական,

բ. ցեխաբուժություն,

գ. շարժաթերապևտիկ,

դ. ռեֆլեքսաթերապևտիկ,

ե. մանուալ թերապևտիկ,

զ. բուժական մերսում».

4) 3-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

□ա. քիմիոթերապիա,

բ. ճառագայթային թերապիա,

գ. վիրաբուժական»,

5) 3-րդ կետի 51-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

□ա. անշարժ կառույցների հետ կապված աշխատանքների իրականացում,

բ. շարժական կառույցների հետ կապված աշխատանքների իրականացում,

գ. ձուլելու հետ կապված աշխատանքների իրականացում (ձուլարան)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2014 թ. հունվարի 15
Երևան